



**Opening  
Extractives**

Unlocking the benefits  
of ownership data



**FREEDOM OF  
INFORMATION**  
CENTER OF ARMENIA

**Դասընթացի համառոտագիր**

**ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԻՐԱԿԱՆ  
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
Աշխատաժողով ԲՀԿ-ների և լրագրողների համար**



## Իրական շահառուների (ԻՇ) բացահայտումը Հայաստանում հետաքննական լրագրության և փաստահեն տվյալների վրա հիմնված շահերի պաշտպանության համար

### ԱՃԽԱՏԱԺՈՂՈՎ

Opening Extractives (OE) ծրագիրը, համագործակցելով Ինֆորմացիայի ազատության կենտրոնի (ԻԱԿ) հետ, հրավիրում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) և լրագրողներին ուսանելու իրական շահառուների վերաբերյալ որակյալ և թարմացված տվյալներ ունենալու կարևորության հարցը, կիսվելու արժեքավոր հմտություններով, գործիքներով և մեթոդոլոգիաներով, որոնք կօգնեն վերլուծելու և օգտագործել ԻՇ հասանելի տվյալները: Երկօրյա սեմինարի ընթացքում նախատեսվում է ամրապնդել մասնակիցների հմտությունները ԻՇ տվյալները վերլուծելու և օգտագործելու հարցում, ինչը կնպաստի Հայաստանում բնական ռեսուրսների ոլորտում կառավարման բարելավմանն և ոլորտի պաշտպանության ապահովմանը:

### ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Բարձրացնել տեղական շահագրգիռ կողմերի իրազեկության մակարդակը ԻՇ հասանելի և թարմացվող տվյալների կարևորության վերաբերյալ և նպաստել տեղական համայնքի՝ շահերի պաշտպանության և տվյալների վերլուծության կարողությունները:
- Վերապատրաստել լրագրողներին, ՔՀԿ-ներին և ակտիվիստներին ԻՇ հասկացության և սահմանման տրամաբանության մեջ, հմտացնել առկա տվյալների հայթայթման և դրանք հետաքննության համար օգտագործելու հարցում:
- Նպաստել ԻՇ տվյալներն իրենց աշխատանքում և հետազոտությունների համար օգտագործող համայնքի ամրապնդմանը, և
- Կառավարությանը և ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությանը տրամադրել գործնական կարծիք ԻՇ վերաբերյալ որակյալ տվյալներ հավաքագրելու և բացահայտման գործընթացը բարելավելու տարբերակների վերաբերյալ:

### ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- ՔՀԿ-ների ներկայացուցիչները, լրագրողները և ակտիվիստները կծանոթանան ԻՇ թափանցիկության (BOT) Հայաստանի օրենսդրական դաշտին և հիմնական հասկացություններին, կսովորեն օգտագործել Բիզնես ռեգիստրի տվյալները:
- Սեմինարի մասնակիցները ունակ կլինեն իրականացնել հետազոտական և/կամ շահերի պաշտպանության նախագծեր և ծրագրեր՝ օգտագործելով ընդհանուր հմտություններն ու գործիքները՝ համատեղելով իրական շահառուների



տվյալները արդյունահանող և բնապահպանական ոլորտի վերաբերյալ առկա այլ տեղեկատվական աղբյուրների տվյալների հետ:

## ԹԵՄԱՏԻԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Սեմինարը կտևի երկու օր՝ սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ը: Դասընթացը վարելու են Opening Extractives և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի թիմերը՝ փորձառու լրագրողների և հետազոտական/շահերի պաշտպանության ոլորտի փորձագետների աջակցությամբ:

- **Օր 1-ին (սեպտեմբերի 30).** **Հայաստանի առաջընթացը իրական սեփականատերերի թափանցիկության հարցում:** Առաջին աշխատանքային օրվա ընթացքում կներկայացվի Հայաստանում իրական շահառուների թափանցիկության (BOT) ընդհանուր նկարագիրը, Հայաստանի բիզնես ռեգիստրը և ընկերության հայտարարագրի ուսումնասիրության ձևերը, կքննարկվի աշխարհում BOT-ի գլոբալ ազդեցությունը և կներկայացվի կոնկրետ դեպքերի ուսումնասիրություններ, որտեղ ԻՇ տվյալները (և այլ աղբյուրներ) օգտագործվել են ընկերությունների անթափանց սեփականության կառուցվածքը բացահայտելու համար:
- **Օր 2-րդ (հոկտեմբերի 1).** **Տվյալների վրա հիմնված նախագծերի հետքերով. ինչպես օգտագործել տվյալների այլ աղբյուրներ հետաքննության և շահերի պաշտպանության համար:** Այս օրվա ընթացքում մասնակիցները կձանոթանան տվյալների այլ աղբյուրների, որոնք կարելի է օգտագործել լրացուցիչ վերլուծության համար, կներկայացվեն տարբեր հետազոտական մեթոդներ, տեխնիկաներ և գործիքներ, որոնք կարող են օգտագործվել տվյալների հավաքագրման և վերլուծության համար: Մասնակիցները կսովորեն՝ ինչպես մշակել տվյալափայտ նախագծեր հետաքննության կամ շահերի պաշտպանության նպատակով, ինչպես ներկայացնել այդ գաղափարներն ու ճիշտ ընտրել անհրաժեշտ տեղեկատվության աղբյուրները: Մասնակիցներին կներկայացվի նաև, թե առաջկա ամիսների ընթացքում ինչ պայմաններով կարող են ստանալ մենթորական աջակցություն իրենց թեմատիկ նախագծերի իրականացման համար:

Աշխատանքային լեզուները՝ հայերեն և անգլերեն: Բոլոր նյութերը կլինեն երկլեզու, աշխատաժողովի ողջ ընթացքում կլինի կենդանի թարգմանություն:



## ԱՅԼ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

- Դասընթացն անվճար է, կազմակերպիչները ապահովում են նաև մասնակիցների տեղափոխությունը:
- Աշխատաժողովը կանցկացվի Ադվերանում: Մասնակիցների ժամանումը նախատեսված է **սեպտեմբերի 29-ի երեկոյան**. համատեղ ընթրիքի շրջանակում մասնակիցները կձանոթանան կզմակերպիչների, դասընթացավարների և մյուս մասնակիցների հետ: Դասընթացը կամփոփվի **հոկտեմբերի 1-ին**՝ ճաշից հետո:
- Խնդրում ենք հնարավորության դեպքում ձեզ հետ բերել դյուրակիր համակարգիչ:
- Դասընթացի բոլոր սեսիաներին մասնակցած անձինք կստանան հավաստագրեր: